



«ՇԻՐԱԿԱՑՈՒԾ ԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Քննական հարցարան

11-րդ դասարան

Հայոց լեզու

Ազգանուն, անուն-----

Դասարան-----դպրոց-----

1. Ըստ անհրաժեշտության՝ լրացրո՛ւ բաց թողնված տառերը և կետադրի՛ր(12-0,5, -0,25):

Աստղաֆիզիկոս մաթեմատիկոս Հայաստանի գիտությունների ակադեմիայի **պատվավոր** նախագահ- Հայաստանի ազգային հերոս Վիկտոր Համբար- ումյանը դեռ վաղ տարիքից աչքի էր ընկնում **բացառիկ** ըն- ունակություններով: Նա ըն-ամենը 3 տարեկան էր բայց կարողանում էր առանց երկար բարակ մտածելու մտովի արագ բաժանել և բազմապատկել երկնիչ թվերը: Այս բազմաշնոր- փոքրիկը շատ էր սիրում նաև կար-ալ և սկսած 4 տարեկանից **անհագորեն** կար-ում էր ինչ ձեռքն էր ընկնում: Գրքերի հանդեպ սերը ապագա մեծ գիտնականին փոխանցվել է հորից Համազասպ Համբար-ումյանից որը **շնոր-ալի** իրավաբան գրականագետ և թար-մանիչ էր: Համազասպ Համբար-ումյանը շատ մտերիմ էր Հով-աննես Թումանյանի հետ հաճախ էր լինում նրա տանը և միշտ որ-ու Վիկտորի համար գրքեր էր **խն-րում** և կարճ ժամանակ անց բարեխ-ճորեն վերադար-նում: Մի ան-ամ դպրոցում ցերեկույթ էր որտեղ ասմունքում էր նաև դպրոցական Վիկտորը: Ցերեկույթին ներկա գտնվող Թումանյանը լսելով Վիկտորի ելույթը մոտենում է **շոյում** տղայի գլուխը: Այնուհետև տեղեկանալով որ Համազասպի որ-ին է համ-ուրում է տղայի ճակատը և հայրաբար օր-նում: Հետագայում ար-են բազում մրցանակների կոչումների և շքանշանների արժանացած Վիկտոր Համբար-ումյանը խոստովանում է որ իր ստացած մրցանակներից լավագույնը Հով-աննես Թումանյանի համ- ույրն էր: Հ. Թումանյանի դուստրը Նվար- Թումանյանը պատմում է որ եր- հայրը ար-են վատառոջ էր հաճախ էր երկտող ուղարկում Համազասպ Համբարձումյանին ասելով. Խն-րում եմ Վիկտորին ուղարկիր ինձ մոտ մի քիչ գրույց անենք հո-խ թեթ-անա: Եվ այդպես մեծ բանաստեղծը



«ՇԻՐԱԿԱՑՈՒՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Վ Ի Ե Վ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

տասներկուամյա տղայի հետ զրուցում էր պոեզիայի աստղերի տիեզերքի մասին այնպես ինչպես կզրուցեր մի հասուն գիտնականի հետ: Այդպիսի մի զրույցից հետո էլ գրվել է Ջ. Թումանյանի վեր-ին «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծությունը:

(Տեքստը որոշ փոփոխություններով կազմված է Նվարդ Թումանյանի հուշերի և Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանի պահոցում առկա նյութերի հիման վրա)

2. Թավ գրված բառերին գրի՛ր երկուական հոմանիշ(3-0,5):

3. Արտահայտի՛ր մեկ բառով (4-0,5):

- հոդս ցնդել-
- աչքերը խոնարհած-
- ոտքի վրա կանգնած-
- հեշտ ընկալվող, հասկացվող-
- ոսկու շերտով պատված-
- արու ձի-
- զանգվածային կոտորած-
- դանակի կտրող մասը-

4. Բացատրի՛ր տրված համանունների իմաստները, կազմի՛ր մեկական նախադասություն(3-0,5):



«ՇԻՐԱԿԱՑՈՒ ԾԵՄԱՐԱՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Վ Ի Ե Վ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

ականակիր-

զևդան-

5.Տեքստում ընդգծված բառերը ենթարկի՛ր բառակազմական վերլուծության (3-0,5):

6. Բացատրի՛ր հետևյալ հարանունների իմաստները(5-0,5):

Բարկ-

Բարք-

Վարգ-

Վարկ-

Ջրավեր-



«ՇԻՐԱԿԱՅՈՒԻ ԾԵՄԱՐԱՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Վ Ի Ե Վ Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն

Lined writing area consisting of 20 horizontal lines for text entry.



«ՇԻՐԱԿԱՑՈՒԹԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ